Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ՝ ԱՐՏԱՍԱՆՎԱԾ ԿՐԵՄԼԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ

(22 ապրիլի 2001 թ.)

Ի Տեր սիրեցյալ եղբայր մեր, Ձերդ Սրբություն Մոսկվայի և Համայն Ռուսաստանի Պատրիարք, Հայաստանի Ազգային Ժողովի նախագահ Արմեն Խաչատրյան, գերաշնորհ հովվապետեր, հոգեշնորհ հայրեր, պետական այրեր, եղբայրներ և քույրեր ի Քրիստոս.

Փառք Ամենակալին, որ մեզ հնարավորություն ընձեռեց ի Քրիստոս մեր եղբայր, Ռուս Ուղղափառ Եկեղեցու մեծապատիվ գահակալ, Նորին Սրբություն Ալեքսի Բ-ի հրավերով կրկին այցելելու հզոր ու մեծ Ռուսաստանի պետության մայրաքաղաք: Մենք մեծ ուրախություն ենք ապրում՝ գտնվելով Ռուս Ուղղափառ Եկեղեցու ավանդական այն հանդիսությանը, որը նվիրված է մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի Սուրբ Հարությանը՝ քրիստոնյաների մեծագույն տոնին:

Սիրելի եղբայրներ և քույրեր. մեզ համար կրկնակի ուրախություն է, քանի որ Նորին Սրբություն Ալեքսի Բ-ի նախաձեռնությամբ այսօրվա հանդիսությունը նվիրված է նաև մեծ ու բախտորոշ իրադարձության հոբելյանին՝ Հայաստանում քրիստոնեության պետականացման 1700-ամյակին:

Աստվածային նախախնամությամբ հայ ժողովուրդը երկու հազար տարի առաջ ընդունեց Ավետարանը Ս. Թադեոսի և Ս. Բարդուղիմեոսի քարոզությամբ: 300 տարի հետո, 301 թ. Ս. Գրիգորի՝ Հայաստանի Լուսավորչի և Տրդատ Գ թագավորի ջանքերով մեր երկիրն ընդունեց քրիստոնեությունը իբրև պետական կրոն: Աստծո Որդին Ինքն իջավ բիբլիական Արարատյան հողի վրա և Սուրբ Աջով ցույց տվեց այն սուրբ վայրը, որտեղ հայ ժողովրդը շուտով պետք է կանգնեցներ Ս. Էջմիածնի Տաճարը:

Մեր պատմության ամենամռայլ շրջաններում Հայ Առաքելական Ս. Եկեղեցու հոգևոր կենտրոնը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, գոյատևել է իբրև լուսատու ջահ՝ պահպանելով Աստծո վառած անաղարտ հոգևոր կրակը: Իրեն՝ Բարձրյալ Աստծուն և Նրա ուխտին մենք հավատարիմ ենք հավիտյան: Իրապես. «Ո՞վ պիտի բաժանի մեզ Քրիստոսի սիրուց. տառապա՞նքը, թե՞ անձկությունը, թե՞ հալածանքը, թե՞ սովը, թե՞ մերկությունը, թե՞ վտանգները, թե՞ սուրը» (Հռոմ. Ը 35-37):

Սիրելի եղբայրներ և քույրեր. անցյալ դարի վերջին տասնամյակը մեզ բոլորիս համար թե՛ Ռուսաստանում, և թե՛ Հայաստանում նշանավորվեց նրանով, որ պետությունը և Եկեղեցին փոխադարձ մերձեցման արմատական քայլեր նախաձեռնեցին՝

հանուն երկրների հոգևոր վերազարթոնքի: Այսօր Ռուսաստանի և Հայաստանի պետական այրերի ներկայությունը վկայում է ոչ միայն այդ մերձեցման, այլ նաև մեր ժողովուրդների մերձեցման մասին, որը միանգամայն նոր նշանակություն, նոր որակ և նոր իմաստ է ձեռք բերում: Որ մեր բարեկամությունը ավելի է ուժեղանում և ամրանում, կարելի է համոզվել այսօր Կրեմլի այս հիանալի Պալատում, որտեղ երկու քույր Եկեղեցիների հետ կողք-կողքի նստած են մեր Եկեղեցիների հարյուրավոր բարեպաշտ և քաջակորով զավակներ:

Հայ և ռուս ժողովուրդների եղբայրական կապերը հիմնված են փոխհասկացողության, հավասարության, արդարության և անշահախնդրության վրա: Ռուսներին և հայերին սկզբնապես միավորել էին համաքրիստոնեական արժեքները՝ սեր մարդավորի հանդեպ, սրտացավ վերաբերմունք միմյանց նկատմամբ, ծանր պահին օգնելու և աջակցելու պատրատակամություն: Այդ պատճառով է, որ մեր համերկրացիներից շատերի համար Ռուսաստանը դառնում է երկրորդ հայրենիքը: Մեր ժողովուրդների բարեկամությունը ամրվածահաճո է, և թող այն օրհնվի հավետ, քանի որ ծառայում է բարուն և աշխարհին:

Առիթից օգտվելով ցանկանում ենք Մեր Հայրական պատգամը և Պատրիարքական օրհնությունը հղել Մոսկվայում գտնվող հայ համայնքի զավակներին, Թեմական խորհրդին ու Հայ Առաքելական Եկեղեցու Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Հայր Եզրասին: Մեր օրհնությունը և շնորհակալությունը մեր Եկեղեցու ճշմարիտ զավակ, «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանակիր, «Ռուսաստանի հայերի խորհուրդ»-ի նախագահ պարոն Արա Աբրահամյանին և բոլոր նրանց, ովքեր իրենց ներդրումն են ունեցել այս փոնախմբությանը:

Ավարտելով Մեր խոսքը, մեկ անգամ ևս ձեզ ենք փոխանցում մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հարության բարի ավետիսը: Եվ կրկին արտահայտում ենք Մեր եղբայրական սերն ու շնորհակալությունը Նորին Սրբություն Մոսկվայի և Համայն Ռուսաստանի Պատրիարքին՝ Սուրբ Հարության ոգեկոչման և 1700-ամյակի փոնակատարություններին մասնակցելու հրավերի համար, և աղոթաբար քաջառողջություն և երկար տարիների կյանք ենք ցանկանում նրան:

Մեր աղոթքն է, որ Հարուցյալ Տերն Իր հովանու ներքո պահի Ռուսաստանը, Հայաստանը և այդ երկրների ժողովուրդներին, որպեսզի Նրա օրհնությունը հանապազ լինի Ռուս Ուղղափառ և Հայ Առաքելական Եկեղեցիների ու նրանց զավակների վրա:

Թող Տերը պահի մեր քույր Ռուսաստանը, մեր քույր Ռուս Ուղղափառ Եկեղեցին և նրանց իմաստուն ղեկավարներին՝ Նորին Սրբություն Ալեքսի Բ Պատրիարքին և Ռուսաստանի մեծարգո նախագահ Վլադիմիր Պուտինին, որովհետև նրանք պետք է առաջնորդեն բարեպաշտ ռուս ժողովրդին խաղաղության և բարօր կյանքի ճանապարհով: Թող Բարձրյալը առաջնորդի մեր երկրները դեպի բարին՝ շնորհելով հավատքի, սիրո և եղբայրության անսպառ զանձերը:

«Օրհնութիւն եւ ողորմութիւն Տեառն եղիցին ի վերայ ձեր ամենեցուն. ամէն»: